



ՄՐԲՈՑ ՎԱՐՂԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ ՏՕՆԸ

387 թուին, Բիզանդական եւ Սասանեան կայսրութիւնները իրենց միջեւ կը բաժնեն Հայաստանը, Բիզանդացիք իրենց տիրապետութեան տակ գտնուող Արեւմտեան Հայաստանի մէջ անմիջապէս վերջ կու տան Հայկական Իշխանութեան, սասանեանները լոյսը կ'ընեն իրենց հեղինակութեան տակ գտնուող Արեւելեան Հայաստանի մէջ: 428-ին, այսպիսով, վերջ կը գտնէ Արշակունիներու թագաւորութիւնը:

Այնուհետեւ պարսիկները Հայաստանը կը կառավարեն նշանակեալ մարզպետներով:

Երբ Յագկերտ Բ. (439-457) գահ կը բարձրանայ, կը փորձէ հայերուն պարտադրել, որ ուրանան քրիստոնէական կրօնը եւ կրակապաշտութիւնը ընդունին:

Հայոց աւագանին, Յովսէփ Հողոցմեցի կաթողիկոսի նախագահութեամբ, Արտաշատի մէջ ժողով մը գումարելով կտրուկ կերպով կը մերժէ Յագկերտի պահանջը:

Հայ եւ պարսիկ ուժերու գլխաւոր ճակատամարտը տեղի կ'ունենայ Արտազ գաւառի Աւարայրի դաշտին մէջ, 451 թուի Մայիս 26-ին: Հայոց 60 հազար քաջարի բանակը, գլխաւորութեամբ հայոց սպարապետ Վարդան Մամիկոնեանի՝

«Վասն Հաւատոյ եւ վասն հայրենեաց», սպարապետին խիզախ ճառով դէմ կ'ելլեն պարսկական 300 հազարի հասնող հզօր բանակին, քաջ



Ի՞ՆՉ Է ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆԸ

Բուն Բարեկենդանը Մեծ Պահքի սկիզբն է: Բարեկենդան կը նշանակէ բարի կենդանութիւն, ուրախութիւն, խրախճանքի օր, որուն կը յաջորդէ Մեծ Պահքը: Այդ պատճառով մարդիկ այդ օրը ոչ միայն խաղեր եւ տօնակատարութիւններ կը կազմակերպեն, այլ նաեւ ճոխ սեղաններ կը պատրաստեն:

Կիրակի, հայ եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Բուն Բարեկենդան է, իսկ յաջոր օր՝ Երկուշաբթի, Փակեալ Խորան, որմէ յետոյ կը սկսի Մեծ Պահքի շրջանը:

Բուն Բարեկենդանի նախորդ օրը, Շաբաթ երեկոյեան ժամերգութենէն ետք խորանի վարագոյրը սեւով կը ծածկուի ու խորանը կը փակուի մինչեւ Մեծ Պահքի աւարտը: Մեծ Պահքի ամբողջ շրջանին պատարագը զոց վարագոյրի ետեւ կը մատուցուի:

Բարեկենդանի տօնակատարութեան սովորութիւնը սկսած է միջին դարերուն: Այդ օր ժողովուրդը իրաւունք ուներ երգելու, պարելու, դիմակներով ծափուելու՝ ծածկելով իրենց դէմքը, որպէսզի ոչ մէկը զիրենց ճանչնար:

Տօնին անբաժան մասն էին ժողովրդական ներկայացումներն ու դիմակաւոր խաղերը: Ներկայացումներու ժամանակ ծիծաղախառն կատակներով կը քննադատէին մեծաւորներն ու իշխանութիւնները: Մեծ ու փոքր կը հաւաքուէին, պետական ու եկեղեցական օրէնքները մէկ կողմ դրած, ամեն մարդ առանց քաշուելու իր խօսքը կ'ըսէր:

Փաստօրէն Բուն Բարեկենդանը, բացի խրախճանքէն, կերուխումէն նաեւ ազատութեան օր էր:



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՎ՝ ՈՒՌԱՆ ԿԱՌԵԱՆ-ՏԻՐՊՈՒՔԵԱՆ ՆԿԱՐԱՋԱՐՈՒՄԸ՝ ՈՒՋՅՈՒ ԲԵՇՈՒՅԵԱՆ



1 գիտնալով, որ հաւատքի ու հայրենիքի պաշտպանութեան ի խնդիր «Իմացեալ մահը՝ անմահութիւն է»:

Այս պատերազմին, հայկական բանակը զոհ կու տայ իր դիւցազն սպարապետ Վարդան Մամիկոնեանը՝ իր 1036 զինակիցներով, որոնց շարքին նախարարներ: Իսկ պարսիկներ մօտ չորս հազար մեռեալ կը ձգեն Տղմուտ գետի ափին:

Աւարայրի ճակատամարտէն ետք հայեր լեռներու եւ բերդերու մէջ ամրացած կը շարունակեն դիմադրութիւնը: Յազկերտի յաջորդ Պերոզի (458-484) թագաւորութեան ամբողջ ժամանակաշրջանին, շուրջ երեսուն տարի, պայքար կը մղեն, գլխաւորութեամբ Վահան Մամիկոնեանի: Ի վերջոյ, Պերոզի յաջորդը՝ Վաղարշ արքան կը ստիպուի հայերու հետ հաշտութիւն կնքել, ըստ որուն՝ հայերը ազատութիւն կ'ունենան իրենց Աստուածը անկաշկանդ պաշտելու, ազգային աստ-հորութիւնները պահելու եւ արդարութիւնը վերահաստատելու:

Վահան մարզպան կը նշանակուի եւ մինչեւ իր մահը 510 թուական, խաղաղութեամբ կը կառավարէ Հայաստանը:



ԽԱՂԵՐ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ,
ԲԱՐԵԿԵՆԴԱՆ,
ԱՄԵՆ ԿՈՂՄ
ԴԻՄԱԿՆԵՐ ԿԱՆ



ԲԱՐԵԿԵՆՂԱՆԸ

Յովհաննես Թումանյան



Ժամանակին կային մարդ մը եւ կին մը: Այս մարդն ու կինը չէին հաւներ զիրար: Մարդը կնոջը կ'ըսէր յիմար, կինը՝ մարդուն, ու միշտ կը կռուէին:

Կինը կը բարկանայ.

- Ա՛խ, երբ կ'ըսեմ յիմար ես, չես հաւատար, այսքան իւղն ու բրինձը մէկ անգամն ինչո՞ւ գնած-բերած ես. հօրդ հոգեճա՞շը պիտի տաս, թե՞ տղուդ հարսանիքը պիտի ընես:

- Ի՞նչ հոգեճաշ, ի՞նչ հարսանիք, ա՛յ կնիկ, ի՞նչ կը խօսիս. տա՛ր, պահէ՛, բարեկենդանի համար է:

Կինը կը հանգստանայ, կը տանի ու կը պահէ:

Ժամանակ կ'անցնի, այս կինը կը սպասէ, կը սպասէ, բարեկենդանը չի գար: Օր մըն ալ տան սեմին նստած էր, երբ կը տեսնէ, որ մարդ մը արագ-արագ կ'անցնի փողոցէն: Ձեռքը ճակատին կը տանի ու ձայն կու տայ.

- Եղբա՛յր, եղբա՛յր, քիչ մը կա՛նգ առ:

Երիտասարդը կանգ կ'առնէ:

- Եղբա՛յր, բարեկենդանը դուն չե՞ս:

Անցորդը կը հասկնայ, որ այս կնոջ խելքը պակաս է, եւ կը մտածե՛լ այո ըսեմ, տեսնեմ՝ ի՞նչ պիտի պատահի:

- Այո՛, ես եմ բարեկենդանը, քոյրի՛կ ջան, ի՞նչ կ'ուզես:

- Կ'ուզեմ ըսել, որ մենք քու ծառաներդ չենք, որպէսզի պահենք քու իւղ ու բրինձը: Զերիք չե՞, որքան պահեցինք... չե՞ս ամչնար... ինչո՞ւ չես գար ու չես տանիր ապրանքը...

- Դե՛հ, մի՛ նեղանար, քոյրի՛կ ջան, ես ալ ճի՛շդ ատոր համար եկած եմ, ձեր տունը կը փնտռէի ու չէի գտներ:

- Դե՛հ, ուրեմն եկո՛ւր ու տա՛ր: Այս մարդը ներս կը մտնէ, իւղն ու բրինձը կը շալկէ, կռնակը կը դարձնէ ու կ'ուղղուի իրենց գիւղը:

Երբ ամուսինը տուն կու գայ, կինը կ'ըսէ.

- Զա՛, այդ բարեկենդան ըսածդ եկաւ եւ իր ապրանքները առաւ-տարաւ:

- Ի՞նչ բարեկենդան... ի՞նչ ապրանք...

- Օ՛, այն իւղն ու բրինձ... Մէկ ալ տեսնեմ՝ վերի կողմէն կու գար, մեր տունը կը փնտռէր: Կանչեցի, լաւ մը խայտառակեցի զինք, ապա իւղն ու բրինձը կռնակը տուի, ու տարաւ:

- Վա՛յ անխելք, քու տունդ քանդուի, երբ կ'ըսեմ՝ յիմար ես, յիմար ես, հապա՞...

Ո՞ր կողմը գնաց:

- Ահա ա՛յն կողմը:

(Շարունակելի)

Բառեր եւ բացատրութիւններ

1.- Զոգեճաշ.- Մեռելի մը հոգիին հանգիստին համար տրուած ճաշ:

2.- Բարեկենդան.- Մեծ պահքը կանխող երկու շաբաթները, որոնց ընթացքին մարդիկ ազատօրէն կ'ուտեն ու կը զուարճանան:

ԱՆՍԱՅՄԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

Ուսումնական այս տարեշրջանին ես ճեմարանական եղայ: Նոր միջավայր, նոր ուսուցիչներ եւ բաւականին դժուար դասեր ունեցայ: Նախակրթարանի մէջ առաջնակարգ աշակերտուհի էի, իսկ ճեմարանի մէջ նոյն մակարդակը պահելու համար, պետք է կրկնապատկէի աշխատանքս: Մտահոգ էի, որովհետեւ ֆրանսերէնը եւ քիմիագիտութիւնը ինծի համար նորութիւն էին:

Սակայն ուսուցչուհիներուն բացատրութեան աջակուրջ հետեւելով, բժախնդիր ու հետեւողական աշխատանքով կրցայ առաջին դիրքը գրաւել:

Անսահման էր ուրախութիւնս երբ պատուոյ ցանկը կարդացուեցաւ եւ առաջինը իմ անունն էր: Կարծես ամբողջ աշխարհը իմս էր այդ վայրկեանին: Աշխատանքիս արդիւնքը արդարօրէն ստացած էի:

Ձանքով ու աշխատանքով առաջին հանդիսացայ, դիւրին չէր, բայց գիտեմ նաեւ, որ այդ դիրքը պահելն ալ դիւրին չէ: Մրցակից ընկերուհիներ ունիմ: Կը խոստանամ յառաջիկայ օրերուն նոյն թափով աշխատիլ:

Ուսման տեսչ ունիմ: Կը հաւատամ, որ ուսումով պիտի կրնամ բարձրունքներ նուաճել եւ փայլուն ապագայ ունենալ:

Արփի Արապանեան
Է. կարգ

Ազգ. Քարեն Եփփէ Ճեմարան

ԸՆԿԵՐԸ

Մարդ արարածը ընկերային էակ է, չի կրնար առանձին ապրիլ: Անշուշտ մեր ծնողքը անփոխարինելի է, բայց ընկեր ունենալն ալ անհրաժեշտ է:

Ընկեր... երկվանկանի այս բառը խորիմաստ է:

Իսկական ընկերը ճշմարտախօս, անկեղծ, գաղտնապահ, բարին կամեցող, լաւ ու վատ օրերուն միշտ կողքիդ եղող, յաջողութեամբ ուրախացող անձն է:

Արդեօք մենք բախտը կ'ունենա՞նք այսօրի ընկերոջ մը ներկայութիւնը վայելելու: Պայման չէ, որ մեր ընկերը յար եւ նման ըլլայ մեզի: Սիրէ՛ այն ինչ որ մենք կը սիրենք, ի վերջոյ ամեն մարդ իր նախասիրութիւններն ու իւրայատուկ բնաւորութիւնը կ'ունենայ: Բայց ընդունելէ չէ, որ ընկերը ստախօս, անգաղտնապահ, նախանձոտ, անտաբեր ու անձնասեր ըլլայ:

Ոմանք միշտ սպասողական դիրքի մէջ կ'ըլլան, թէ ե՞րբ պիտի սխալիս, որպէսզի իրենք բանբասելիք նիւթ մը ունենան, իսկ երբ աչքերդ արցունքոտ տեսնեն՝ կը հրճուին ու կ'ուրախանան:

Դուք ըսէ՛ք, մարդկայի՞ն է, որ քու ցաւը հրճուանք պատճառէ ուրիշին: Անշուշտ ո՛չ:

Ընկեր չունենալ չի նշանակեր սիրուած անձ չըլլալ, այլ՝ տուեալ անձը կը նշանակէ թէ յուսախաբութիւն մը ապրած է:


Ես անձնապէս կը սիրեմ ընկերներս, բարին կը կամենամ ու հարկ եղած պարագային օգնութեան ձեռք կ'երկարեմ անոնց:

Բարի ու առաքինի ընկերներ միշտ ալ կան, կարելորդ՝ սիրոյ, վստահութեան, անկեղծութեան վրայ հիմնուած ընկերային սերտ յարաբերութիւն ստեղծելն է ու զայն պահելն է:

Մարի Ռոզ Քեօշկերեան
Ը. կարգ

Ազգ. Քարեն Եփփէ Ճեմարան

«ԱԿԼԱՏԻՉ, ԶՈՒԱՆԸ ՎԻՉ ԵԿԱՒ ՄԵՉ ԶԻՒՐ՝ ԿԱԽՈՒԱՒ ԵՐԴԻՍ»



Ո՞վ է Ակլատիզը

Բարեկենդանին գիւղին հրապարակը տեղի կ'ունենար ձիարշաւ, որ կ'աւարտէր «Ուտիս տատին» վոնտելու եւ «Պաս պապին» հրաւիրելու ծեսով:

«Ուտիս տատը», որ Բարեկենդանի օրերուն բոլորը ուտել-խմելու կը հրաւիրէր, այժմ արդէն գոգգուած տիկնիկ է: Բարեկենդանի վերջին օրը, երեկոյեան հանդիսաւոր կերպով կը գլորի սարի գլխէն՝ երիտասարդներուն բարեկենդանեան վերջին խնճոյքը հովանաւորելէ ետք: Անոր փոխարինելու կու գար «Պաս պապին» կամ «Ակլատիզ»ը:

Ակլատիզը պատրաստուած կ'ըլլար սոխէ, վրան եօթը փետուր եւ թելով առաստաղէն կախուած: Չայն առաստաղէն կախելու ատեն կ'երգէին.

Տատը գնաց, շերեփը ձեռքին,

Պապը եկաւ չոմբախն ուսին:

Ակլատիզի եօթը փետուրները, որոնք Մեծ Պահքի եօթը շաբաթներուն կը համապատասխանէին, օրացոյցի դեր կը կատարէին, իւրաքանչիւր շաբթուան վերջը մէկ փետուր կը վերցնէին, կը հաւատային, որ եթէ պահեցողութեան ընթացքին սոխը ծիլ տար, ապա ուրեմն այդ տարի ընտանիքին բարօրութեան կը սպասէր, իսկ եթէ պատահէր, որ սոխը թմրէր ու չորնար, ձախորդ օրեր կ'ակնկալուէին: